



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.

«ԲԱՐԱԿԱՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«15 » 07 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԵՈՒԹՅԱՆ

ԲՓ 63

Ձեռնարկողը՝

**<<Գրին Փաուր>> ՍՊԸ**

Բ. Երևան, Ծահմայան 7, 1 եթր. լու 13

Գործունեությունը՝

**<<Մեղրի-2>> ՓՀԵԿ-ի կառուցման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայդ  
<< Այունիքի մարզ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն»  
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առջիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 63

«19 » 07 2017թ.

**«Գրին Փաուլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու:

«Գրին Փաուլ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

ՀՀ Սյունիքի մարզ

Գործունեության կատեգորիա՝ «Գ»

*Արշակ Մանուկյան*

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել <<Մեղրի 2>> ՓՀԵԿ-ի կառուցման նախնական գնահատման հայտը:

«Մեղրի 2» ՓՀԵԿ-ը նախատեսվում է կառուցել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Մեղրի գետի վրա, օգտագործելով գետի  $598.0 \div 522.0$  նիշերի միջև ընկած 76մ անկումը:

Նշված անկումը 1910մ երկարությամբ, 1400մմ տրամագծի ճնշումային խողովակաշարը Մեղրի գետի մնացորդային ելքերը կմուտեցնի նախատեսվող ՓՀԵԿ-ի շենքին:

«Մեղրի 2» ՓՀԵԿ-ի հիմնական ջրաէներգետիկ ցուցանիշներն են՝

Հաշվարկային մակարդակը վերին բիեֆում – ՆԴՄ	- 598.0 մ
---	-----------

Հաշվարկային մակարդակը ՓՀԵԿ-ի ստորին բիեֆում	- 522.0 մ
---	-----------

Ստատիկ ճնշումը	- 76.0 մ
----------------	----------

Հաշվարկային ելքը	- 4.1 մ <sup>3</sup> /վ
------------------	-------------------------

Հաշվարկային նետուո ճնշումը՝	
-----------------------------	--

Մաքսիմալ H <sub>max</sub> (Q <sub>min</sub> =0.05մ <sup>3</sup> /վ)	- 75.8 մ
---	----------

Մինիմալ H <sub>min</sub> (Q <sub>max</sub> =1.9մ <sup>3</sup> /վ)	- 64.3 մ
---	----------

Հաշվարկային հզորությունը	- 2.11 ՄՎտ
--------------------------	------------


Ելեկտրաէներգիայի քազմամյա միջին արտադրանքը	- 8.73 մլն.կՎտժ
--	-----------------

50% ապահովածության տարվա տարեկան արտադրանքը	- 9.48մլն.կՎ.տժ
---	-----------------

Հիդրոագրեգատների քանակը	- 3 հատ
-------------------------	---------

Մեղրի գետը հանդիսանում է Արաք գետի ձախակողմյա վտակը և թափվում է վերջինիս մեջ գետաքերանից 312կմ հեռավորության վրա: Ընդհանուր ջրհավաք ավագանը 336կմ<sup>2</sup> է, գետի երկարությունը՝ 36կմ, գետի միջին թեքությունը՝ 62%:

Մեղրի գետի էներգետիկ պոտենցիալն օգտագործելու նպատակով գետի վրա իրականացվելու են հիդրոտեխնիկական դիմիար կառույցներ, որոնք ստեղծում են վերին բիեֆում 598.0մ, ստորին բիեֆում 522.0մ նիշերը՝ ընկած հատվածում ստեղծելով 76.0մ ստատիկ ճնշում:



Գլխային հանգույցը 27.3մ ընդհանուր ճակատային երկարությամբ, քաղկացած է հետևյալ հիմնական կառուցվածքներից՝

Սետաղական խողովակով ջրափային պատվար, որի դիմիարային ճակատի քարձրությունը 2.0մ է, կունենա 8.0մ բոխըով ջրափային ճակատ։ Ջրափային պատվարից հետո գետի հունն ամրացված է 11.0մ երկարությամբ և 9.0մ լայնությամբ ոխրերմայով, որն իրականացվելու է քարալիցըով։

Վերին բիեֆում իրականացվելու է 5.5մ երկարությամբ, 12.0մ լայնությամբ և 0.8մ հաստությամբ կավավազային շերտով առաջնատափ, որն ամրացվում է 30 սմ հաստությամբ քարե սալարկով, նախապես իրականացված ավագե նախապատրաստական շերտի վրա։

Պատվարի ճակատի ծախ մասում կառուցվելու է միաձույլ ե/թ ջրող լվացիչ ջրանցք, որի մուտքի նիշը 596.0մ է, ունի 7.2մ լայնություն և 7.0մ երկարություն։ Լվացիչ ջրանցքի գլխամասում տեղադրվելու է 3 հատ հարթ փական։ Լվացիչ ջրանցքը իրականացվելու է B20 դասի միաձույլ ե/թ-ից։

Ջրընդունիչ, որն կունենա 7.0մ երկարություն և 7.50մ լայնություն։ Ջրընդունիչի մուտքի նիշը (597.00մ) գտնվելու է ՆԴՄ-ից 1.0մ-ով ցածր՝ ապահովելով 4.10մ<sup>3</sup>/վ ջրի մուտքը ջրընդունիչ։ Ջրընդունիչի գլխամասում տեղադրվելու են աղբապահ ճաղավանդակներ։ Ջրընդունիչը իրականացվելու է B20 դասի միաձույլ ե/թ-ից։

Պարզաբան, որ կունե և ա 6.50մ լայնություն և 26.0մ երկարությամբ երկու խուց, ապահովվելու է կախված ջրաբերուկների 90%-ի նատեցումը (այնուհետև նաև դրանց հեռացումը դեպի գետ, մաքրման խցի և մաքրի խողովակի միջոցով) և դեպի ճնշումային խուց համեմատարար մարուր ջրի մուտքը։ Մաքրի խողովակը կունենա 11.60մ երկարություն և իրականացվելու է Ծ1020մմ մետաղական խողովակից։ Բացի ձկնանցարանից, ձկների պահպանությունը լիարժեք և հուսալի ապահովվելու համար նախագծում նախատեսված է ճնշումային ավագանում՝ դերիվացիոն խողովակաշարի մուտքի վրա, տեղադրել մանրաճաղավանդակ և նաև լրացուցիչ հնմխհնմ չափերով ձկնապաշտպան մետաղական շժանգոտվող ցանց, որը կկանխի նաև մանրածկների մուտքը հիդրոագրեգատների բիակների վրա։ Մաքրի խողովակի գլխամասում տեղադրվելու է 1 հատ խորքային փական։ Պարզաբանը իրականացվելու է B20 դասի միաձույլ ե/թ-ից։

Ծնշման խուց, որտեղ տեղադրվելու են մանր ճաղավանդակ և օդահան խողովակ Ծ426x6մմ մետաղական խողովակից։ Ծնշման խուցը իրականացվելու է B20 դասի միաձույլ ե/թ-ից։

Պատվարի ճակատի աջ մասում կառուցվելու է ձկնանց, որն իրենից ներկայացնում է քազմաստիճանային կասկադ (9 սեկտոր)՝ 1.5մ լայնությամբ և 14.85մ ընդհանուր երկարությամբ, որի մուտքի նիշը 596.80մ է։ Զկնանցը ապահովվելու է սանիտարական ելքերի հեռացումը, ինչի շնորհիվ Մեղրի գետում գոյություն ունեցող ձկնատեսակները անարգել շարժվում են դեպի վերևի-ստորին բիեֆներ։ Զկնանցը իրականացվելու է B20 դասի միաձույլ ե/թ-ից։ Զկնուուր և գետի լծորդման հատվածում նախատեսվում է MJK 713 մակնիշի ջրաչափիչ սարքավորում։

Ճնշումային խողովակաշար, որն իրենից ներկայացնում է 1910մ ընդհանուր երկարությամբ պողպատե խողովակ 1420մմ տրամագծով՝ պատերի հաստությունը համապատասխանարար փոփոխվում է 10-ից 12մմ։ ՓՀԵԿ-ի շենքին կից կառուցվող խարսխային հենարանում ճնշումային խողովակաշարը ճյուղավորվելու է 3 մասի, որոնցից յուրաքանչյուրը համապատասխան ագրեգատին մոտենում է 800, 600 և 600մմ տրամաչափի պողպատե խողովակով։ Օգտագործված ջուրը յուրաքանչյուր ագրեգատից ե/թ ջրանքներով քափվում է գետ։

ՓՀԵԿ-ի շենքը հատակագծում ունի 27.9x12.5մ չափերը, քարձրությունը կազմում է 10.7մ։

<<Մեղրի 2>> ՓՀԵԿ-ի տեխնոլոգիական սարքավորումը իր մեջ է ներառում մեխանիկական սարքավորում, որը տեղադրվելու է գլխային հանգույցում և մեխանիկական ու հիդրոուժային, որը տեղադրվելու է ՓՀԵԿ-ի շենքում։

Նախագծվող «Մեղրի 2» ՓՀԵԿ-ում տեղադրվելու են երեք ագրեգատ՝ 1000, 800, և 400կՎտ հզորության, 6.3կՎ լարման, օսφ 0.8 գեներատորներով։

Նախագծվող կայանը, համաձայն «ՀԵՑ»-ի հետ նախական համաձայնության, նախատեսվում է միացնել 35կՎ լարման էլեկտրահաղորդման գծին, կառուցելով մոտավորապես 0.5կմ օդային գիծ։ Կայանի շենքի մոտ նախատեսվում է տեղադրել 6/35կՎ լարման ենթակայան 2x1.6 ՄՎԱ հզորության։



Ենթակայանը կոմպլեկտավորված է 2x1600կՎԱ հզորության 6/35կՎ լարման տրամադրության երով, որոնք 35կՎ անջատիչներով միանում են 35կՎ ցանցին:

6կՎ-ի բաշխիչ սարքը երկսեղիչանոց է, տեղադրվելու է ՀԵԿ-ի շենքին կից, առանձին շենքում:

Ենթակայանի սեփական կարիքների վահանի էլեկտրամատակարարումը իրականացվելու է երկու, տարբեր սեղիչաներից սնվող, 6/0.4կՎ լարման 40կՎԱ հզորության սեփական կարիքների տրամադրության երթից:

35կՎ լարման կողմի դեկավարման, չափման, պաշտպանության և ազդանշանի ֆունկցիաները իրականացվելու են էլեկտրոնային թվային սարքերով, որոնք տեղադրվելու են ՀԵԿ-ի ներսում, հերթապահի սենյակում:

Վրարի ժամանակ տրամադրության յուղի և անձրևաջրերի հեռացման համար նախատեսված է յուղահավաք հոր:

ԵԿ-ի ցանկապատումը ընդունված է խորացված հիմքով, մետաղական պանելներով:

Բոլոր գեներատորները միացվելու են 6կՎ-ի կոմպլեկտ բաշխիչ սարքավորումներին, որոնք կոմպլեկտավորվելու են KCO-298 մակնիշի, միակողմանի սպասարկման քիչներով, անջատիչներով, բաժանիչներով, հոսանքի և լարման տրամադրության երթից, գերլարման սահմանափակիչներով:

Ներկայացված նախանական գնահատման հայտով նախատեսված է հակարդեհային միջոցառումներ, որոնք ընդգրկում են իրենց մեջ տրամադրության Հրդեհամարման Զրային Ավտոմատ Համակարգ (ԱՅԲՊ) կազմված ջրասնուցիչից, խողովակների համակարգի առաջին սեղիչաներից ըստ տրամադրության միավորի քանակի:

Կենցաղային կոյուղաջրերը ՓՀԵԿ-ի շենքի հեռացվելու են ինքնուրույն 100մմ տրամագծի խողովակով դեպի արտաքին կոյուղու բետոնապատված արտաքնոցի հորը: Այն պարբերաբ մարգվելու է ավտոասինիզացիոն մեքենայով:

ՓՀԵԿ-ի շենքի ջեռուցումը կատարվելու է մինչև 3կՎ-ի հզորության էլեկտրական ջերմաօդամուխներով, որը կապահովի 18°C ջերմություն շենքի ներսում ձմռանը, իսկ ամռանը կաշխատի որպես օդափոխիչ:

ՓՀԵԿ-ի շենքի մեջ անհրաժեշտ է ունենալ տեխնիկական և խմելու ջրի առանձնացված համակարգ:

Հակարդեհային ջրերի համակարգը պետք է ապահովված լինի անխափան ջրամատակարարմաբ:

Ջրի միջին ծախսը շենքի ներքին հրդեհամարման համար պետք է լինի 10լ/վ, իսկ արտաքին հրդեհամարման համար՝ 15լ/վ: Խմելու ջրի պահանջը պետք է լինի 2լ/վ:

Խմելու ջրի ջրամատակարարումը շահագործող անձնակազմի համար հնարավոր է անցկացնել 70-100մմ տրամագծի խողովակով մուտքա աղբյուրներից, կամ նախատեսվում է խմելու ջուրը բերել փորրածավալ տարրաներով (բիոներով) մինչև 40լ տարողությամբ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր անձի ջրի պահանջը կազմում է ~70լ/օր: Հնարավոր է նաև շենքում տեղադրել խմելու ջրի կուտակիչ 500լ տարողությամբ:

Որպես անկախ հակարդեհային II ջրագիծ, կայանային հարթակում նախատեսվում է ունենալ պահեստային 2 տարողություն՝ 22.5մ<sup>3</sup> ծավալով, արտակարգ իրավիճակներում օգտվելու համար:

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 927-Ն որոշմամբ ամրագրվել է, որ բնապահպանական բողքի արժեքը որոշելիս, որպես հիմք ընդունվում է տարվա սեզոնային ժամանակաշրջանում առավել նվազագույն ելքեր ունեցող 10 իրար հաջորդող օրերի միջին ելքը: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրած Զրօգտագործման բույլության «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի գլխային հանգույցի ուղղահատածքում բնապահպանական բողքը կազմում է 0.11մ<sup>3</sup>/վրկ.:

Գլխամասային կառուցվածքների գետահատածքի ջրհավաք ավագանում, բացի էներգետիկայի, առկա է Մեղրի-Նոնաձոր ինքնահոս համակարգը, որի ջրառը գտնվում է նախատեսվող «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի ջրաղից մոտ 6կմ հեռավորության վրա, շնորհիվ ինչի բնապահպանական բողքերը իրագործելուց հետո, գետի ողջ մնացորդային հոսքը կարելի է օգտագործել էլեկտրաէներգիայի արտադրման համար:



Նախագծվող «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի կառուցվածքների գրադեցնող տարածքները չեն ընդգրկվում «Արևիկ» ազգային պարկի տարածքում և գտնվում են ավելի քան 15կմ հեռավորության վրա: Նախագծվող «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի կառուցվածքների գրադեցնող տարածքները չեն ընդգրկվում «Քողաքար» պետական արգելավայրի տարածքում և գտնվում են ավելի քան 6կմ հեռավորության վրա: Սյունիքի մարզում՝ Խուստուփի լեռան հարավարելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսարելյան լանջերին՝ Ծավ և Ծիկահող գետերի վերին ավազաններում է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Ծիկահողի» արգելոցը: Նախագծվող «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի կառուցվածքների գրադեցնող տարածքները չեն ընդգրկվում «Ծիկահող» պետական արգելոցի տարածքում և գտնվում են ավելի քան 17կմ հեռավորության վրա:

«Մեղրի 2» ՓՀԵԿ-ի շինարարական աշխատանքների համար նախատեսված տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր) գոյություն չունեն: Շինարարական աշխատանքների համար նախատեսված տարածքում, համաձայն տեղազննման աշխատանքների տվյալների և հրատարակված գիտական և քարտեզագրական նյութերի՝ չեն հայտնաբերվել հազվագյուտ, ենդեմիկ, անհետացող կամ անհետացման եղին գտնվող, «Կարմիր Գրքում» գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ:

ՓՀԵԿ-ի ենթակառուցվածքների տարածքները գորկ են բուսականությունից: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է առանց ծառահատումների:

«Մեղրի 2» ՓՀԵԿ-ի շինարարությունը և շահագործումը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կունենա, թե՛ դրական, և թե՛ բացասական ազդեցություն: Որոշակի ազդեցություններ կլինեն հողի, ջրի, բուսական և կենդանական աշխարհի, իսկ շինարարության ընթացքում նաև օդի վրա: Շինարարական աշխատանքներ իրականացնելիս ակնկալվում է, որ ժամանակավոր շինությունները կտեղադրվեն բուսածածկից գորկ վայրերում՝ հողի մակերեսից բարձր: Այսպիսի լանջաֆլուում կառույցները իրականացնելիս, բացասական ազդեցությունը մեղմացնելու նպատակով, շինարարական նորմերով պահանջվում է կանաչապատել և բարեկարգել տարածքները: Պահանջվում է ՓՀԵԿ-ի շենքի կառուցումը ավարտելուց հետո հարթեցնել տարածքը, այն ցանկապատել, տնկել ծառեր և թիւր, ցանել խոտ:

Բացասական ազդեցությունը մեղմացնելու և բուսածածկը վերականգնելու նպատակով կկատարվի ծառատունկ, տնկարկները կկատարվեն ՀԵԿ-ի շենքի տարածքում: Օգտագործվելու են ծառատեսակներ, որոնք բնորոշ են տվյալ լանջաֆլուին:

Կանաչապատման ընթացքում կիրականացվի նաև տվյալ լանջաֆլուին բնորոշ թիւրի տնկարկ: Ծառատունկը կատարելուց հետո պատվիրատուն պարտավորվում է ապահովել տնկարկների խնամքը հետազա 4 տարիների ընթացքում:

Բացասական ազդեցությունները մեղմելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով համաձայն նախագծային փաստաթղթերի նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների ժամանակ՝ չորային քամոտ օրերին, ջրցան մերժմաների միջոցով խոնավացնել հողի և ավտոճանապարհների մակերեսը՝ փոշու արտանետումները կանխելու նպատակով,

- պահպանման ենթակա բուսաշերտը կտրվելու, տեղափոխվելու և պահեստավորվելու է,

- մարդկերթությունը, օգտագործած ավտոդրութերից և այլ աղտոտումներից, որը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլատրված վայր,

- շինհրապարակների, ՓՀԵԿ-ի շենքի շրջակայրի մաքրում, կանաչապատում և բարեկարգում:

Շրջակա միջավայրի պահպանման և ձկնապաշտպան կառույցների իրականացման համար նախատեսված է 6500.0հազ. դրամ:

### ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը կարելի է ներահանգել, որ նախատեսված միջոցառումների արդյունքում «Մեղրի 2» ՓՀԵԿ-ի (կառուցման և հետազա շահագործման ընթացքում) տարածքի աղտոտվածությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով (օդ, հող, ջուր) կզտնվի թույլատրելի նորմայի սահմաններում: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:



Այսպիսով, հիմք ընդունելով ՓՀԿ-ի հզորությունը, խախտվող տարածքների մակերեսը, նախագծով մշակված բնապահպանական միջոցառումները՝ կարելի է ենթադրել, որ նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կունենա նվազագույն ազդեցություն՝ չգերազանցելով սահմանված նորմերը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի են առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

### Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող աշխատանքներն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի պահանջներով,

- Նախատեսվող գործունեությունն իրականացնել համաձայն ՀՀ հողային և ջրային օրենսգրքերի,

- Եթե նախատեսվող գործունեության շինարարության կամ շահագործման փուլում հայտնաբերվեն ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ առաջնորդվել ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն և N72-Ն որոշումներով,

- Հողի բերրի շերտի օգտագործումը կատարել համաձայն ՀՀ կառավարության 08.09.2001թ. N1396-Ն որոշման,

- Հողային աշխատանքներից առաջացած բուսահողի, ավելցուկային գրունտի, շինարարական աղբի պահպանումը կամ տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գրին Փաուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անդրի 2» ՓՀԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Զ. Զուննաշյան